ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1 նոյեմբերի 2023թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-06
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ, ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Զուլհակյանի, Արմինե Թումասյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի, Արմեն Ասատրյանի կազմով, 2023թ. նոյեմբերի 01-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը իր՝ 03.10.2023թ. թիվ ՄԽ-Ո-02 որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

01.11.2023թ. Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդներ Նարինե Ավետիսյանի, Հայկուհի Հարությունյանի և Հովհաննես Նալբանդյանի ներկայացրած հայտերը: Հայտերի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Նարինե Ավետիսյանի, Հայկուհի Հարությունյանի և Հովհաննես Նալբանդյանի ներկայացրած փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 03.10.2023թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերը՝ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի փաստաթղթային փուլի ավարտը,
2. Հաստատել Նարինե Ավետիսյանի հայտը,
3. Հաստատել Հայկուհի Հարությունյանի հայտը,
4. Հաստատել Հովհաննես Նալբանդյանի հայտը,
5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հարցազրույցի փուլը (այսուհետ՝ Հարցազրույց) անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում, ԱԺ վարչական շենքում,
6. Հարցազրույցի տևողությունը յուրաքանչյուր հավակնորդի համար սահմանել մինչև 1 ժամ,
7. Սահմանել հավակնորդների Հարցազրույցի փուլի հերթացուցակը՝ ըստ այբբենական կարգի,
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ